

ուրիշ մասը գտնուում է Տաթևում, «Աւագ սուրբ նշան» անուամբ, մի մասն էլ Վայոց Ձորում՝ «Արկազու սուրբ խաչ» անուամբ:

Մի արծաթէ մեծ խաչ, որ յիշատակէ Զիթախեանց եղբայրներին, 1656 թուին նուիրուած:

Քառասուն և հինգ արծաթէ խաչեր, որոնցից վեցի մէջ ամփոփուած են հետևեալ սրբերից մինի մասունքը՝ Պօղոս առաքեալի, Գէորգ Զօրավարի, Մինաս Զինաւորի, Յակոբ առաքեալի, ս. Կարապետի, Յակոբ Մծբնայ Հայրապետի:

Թջեայ մի խաչ ևս կայ, որի մէջ ամփոփուած է Վարդան զօրավարի ատամը:

Երկու հատ էլ փայտէ խաչեր կան, նուրբ քանդակներով և եզերքը արծաթով պատած:

Ուշազբաւ են նաև չորս հատ արծաթէ ոսկէզօծ մասնատիեր, տասն հատ նոյնպիսի սկիհներ, 3 հատ արծաթէ բուրվառներ, 2 հատ արծաթէ խնկատուփ, մի հատ արծաթէ մեռնատուփ, մի զոյգ արծաթէ քշոցք, մի հատ արծաթէ ոսկէզօծ խաչվառք:

Բաւականաչափ եկեղեցական զգեստների մէջ աչքի են ընկնում Դաւիթ կաթուղիկոսի եպիսկոպոսական թագը և եմիփորոնը, չորս հատ արծաթապատ սաղաւարտները, եպիսկոպոսական փղոսկրեայ գաւազանը և այլն:

ՎԱՆՔԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Ղուկասեանի շինած դպրոցական շէնքի սենեակներից մինը դարձրած է գրադարան և այստեղ բաւական խնամքով պահուում են մօտ ութ հարիւր կտոր տպագրուած և 112 ձեռագիրներ՝ մեծ մասամբ կրօնական բովանդակութեամբ:

Զեռագիրների ցուցակը նախ կազմել է Եղիա արեղայ Զաւախանը՝ 1870 թուին, ապա Սահակ վարդապետ Ամատունին 1892 թուին: Այս երկու ցուցակներն էլ շատ համառօտ են և, նոյն իսկ քաղուածքներ յիշատակարաններից չունեն: Ամատունու կազմածը տպուած է Մեարովը արք-եպիսկոպոս Սմբատեանի «Տեղագիր Գեղարքունի գաւառի» մէջ (եր. 395—412): Սրանից անհամեմատ մանրամասն և յիշատակարանների քաղուածքներով, թէպէտև դարձեալ ոչ լրիակատար, կազմել է պրօֆ. Ն. Մառը 1890 թ. որ և տպուել է 1892 թ. ռուսերէն՝ Մոսկվայում և հայերէն թարգմանութեամբ՝ Վիեննայի Մխիթարեանների մօտ:

Վերջերս Թովչեանը ևս կրկին կատարել է այդ աշխատանքը, սակայն դեռ ևս չի հրատարակել:

Ի նկատի առնելով, որ պրօֆ. Մառի կազմած ցուցակը արդէն բաւական մանրամասն է՝ ես աւելորդ համարեցի կրկին կազմել:

Ձեռագրներից ամենահինը մի աւետարան է՝ հաւանականօրէն Ժ. դարից:

ՎԱՆՔԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Սկանայ վանքը այժմ ունի հետեւեալ կալուածները.

ա. Յամաքարերդ և Գոմաձոր գիւղերը, իրենց հողերով, որ հասնում է 2273 դեսիատին և 140 ք. սաժէնի, Աշոտ թագաւորի նուիրած վեց գիւղերից մնացել են միայն այս երկու գիւղը: Սրանից տարեկան եկամուտը առնուազը 1000 բ. աւելի է:

Մի թերակղզի, Ելենովկա և Օրդակու գիւղերի միջև. շահագործւում է իբր խոտատեղի և ձկնորսատեղի. կապարով է տրւում տարեկան 4—500 բուբլիով:

Երևանում 2 տուն և չորս այգի:

Թիֆլիսում 5 խանութ և մի այգի:

Չանգի դեռի վրայ 3 ջրաղաց, որոնցից մինը նոր-ձեռի, երկաթէ:

Նոր-Բայազետում 2 ջրաղաց և այլն:

Այս կալուածները տարեկան տալիս են 5—6000 բ. եկամուտ:

Բացի սրացներից վանքը ունի 5000 բ. արքունի գանձարանում և մի կտակագիր՝ հետեւեալ բովանդակութեամբ. 1890 թուին Թիֆլիսեցի Աղէքսանդր Թայրեանը իւր հօր՝ Սկանում ճգնութեան ընդունուած Ղազար վարդապետի յիշատակին 3,500 բուբլի դրամ գրեց արքունի գանձարանում, որ 30 տարի շահեցնելուց յետ, այն է 1920 թուին այդ գումարով Սկանայ վանքում ուսումնարան բացուի ¹⁾:

¹⁾ Հրամանագիր Երևանի կոնսիստորիայի 1890 թ. № 2889.